



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՆՆԵ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2014թ. փետրվարի 24

թիվ 20- Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՆՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐԱՆԱՅԻՆ
ՀՈՐԴԱՑՈՒՄՆԵՐԻ, ՍԵՆԱՎՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.22 կետերի պահանջներով

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. 2014 թվականի գարնանային հորդացումների, սելավների վտանգի նվազեցման և դրանց կանխարգելման միջոցառումների իրագործման նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի սելավավտանգ գոտու համայնքների ղեկավարներին առաջարկել.

- 1/ 2014 թվականի մարտի սկզբից իրականացնել սելավատարների մաքրման աշխատանքներ;
- 2/ հորդացումների սպառնալիքի դեպքում համայնքի վտանգավոր թաղամասերից կազմակերպել բնակչության, գյուղատնտեսական կենդանիների և նյութական արժեքների տարահանում,
- 3/ նշված միջոցառումներն իրականացնել համայնքների բյուջեների հաշվին,
- 4/ համայնքի ավագանու համաձայնությամբ ընդունել համապատասխան որոշումներ՝ նշված միջոցառումներն իրականացնելու համար:

2. Պետական կառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ գործնական և նյութական աջակցություն ցուցաբերել տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին՝ հսկողություն սահմանել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ և կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

4. Սույն կարգադրության մասին իրազեկել սելավավտանգ գոտու համայնքի ղեկավարներին, պետական կառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին և մարզպետարանի համապատասխան աշխատակիցներին:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետության գործադիր մարմինների հարցերով վարչության պետին:



[Handwritten signature]

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ